ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Հայ գրերի գիւտը և տպագրութեան սկզբնաւորութիւնը մի մի լուսաւոր դարագլուխներ են հայ ժողովրդի պատմութեան մէջ։ Հայ գրի և տպագրութեան ազդեցութիւնը հայ ժողովրդի քաղաքակրթութեան վրայ հզել է հսկայական։ Շնորհիւ գրի ու տպագրութեան մենք ժառանգել ենք նախորդ սերունդներից մեր ամբողջ մատաւոր հարստութիւնը և եթէ իրողութիւն է ներկայումս, որ հայ ժողովրդի մէջ կայ քաղաքակրթուելու և առաջադիմելու անհուն տենչ, դրանով մենք պարտական ենք քաղաքակրթութեան այն մեծ ֆակտորներին, որոնց նուիրած են այսօրուայ տօնական հանդեսները։ Վերապրելով հայ ժողովրդի հետ միասին մեր պատ-

մական ու լուսաւոր մոմեռները. Անդրկովկասի Հայուհեաց Որբախնամ ընկերութեան վարչութիւնը խորին երախտագիտութեան զգացմունքներով կանգ է առնում մեր ինկելի նախահայրերի անմոռաց անունների վրայ և ողջունում է ու շնորհաւորում Ձերդ Վեհափառութեան Հայ ժողովրդի այս Մեծ տօնը.

Նորին Սրբութեան Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. Սրբազնագոյն Կաթուղիկոսին Ամենայն Հայոց

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Թիֆլիսի Հայ վաճառականութիւնը, որ հանդիսանում է Կովկասի Հայ առեւտրական աշխարհի մէջ առաջադոյն անդամ իր բազմութեամբ և հնութեամբ, չէր կարող անտարբեր մնալ դէպի այն կոչը, որ Ձեր Վեհափառութիւնը *բարեհաճել էր անել իրան, հրաւիրելով, իբրև Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հարազատ զաւակ և իբրև Հայ ժողովրդի մի ստուար դասակարգ, մասնակցել Հայ գրերի գիւտի 1500-ամեակի և Հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ փառաւոր Յոբելեանին, որի տօնախմբութիւնը կատարւում է այսօր ս. էջմիածնում, իբրև Համազգային հանդէս* Ձեր Վեհափառութեան *Նախագահութեան ներքոյ.*

Վաճառականութիւնը ամենամեծ պատրաստակամութեամբ և համակրութեամբ ընդունեց իրան արած այդ մեծ պատիւը, նախ իբրև հարազատ զաւակ Մայրենի եկեղեցւոյ, երկրորդ ի նկատի ունենալով, որ ներկայ Յոբելեանը մինն է այն գլուղնագիւտ յոբելեաններից, որոնց կընախանձէին շատ աւելի մեծ ազգեր, որովհետև քիչ ազգեր կարող են պարծենալ պատմական այնքան խոր հնութիւն ունեցող փառապանծ ակտով, որպիսին հանդիսանում է գրերի գիւտը 1500 տարի առաջ իբրև ապացոյց Հայ ժողովրդի քաղաքակնութեան խորին հնութեան.

Բայց Հայ վաճառականութիւնն ունէր և մի ուրիշ դրդիչ պատճառ մասնակցելու այս Մեծ Յոբելեանին վերյիշելու համար պատմական այն անհերքելի փաստը, որ եթէ Հայ գրերի գիւտը կատարուեց Հայոց եկեղեցւոյ անմահ ներկայացուցիչների ջանքերով և աշխատութեամբ, Հայ տպագրութիւնը, իբրև ոչ պակաս կարևոր գործօն Հայ ազգի քաղաքակրթութեան, իր ծագումը և զարգացումը պարտական է մեծ չափով նաև Հայ առևտրական դասի ներ-

կայացուցիչներին, որոնք համակամայով տարագրութեան անձերին կա-րեւորութիւնը, չըխնայեցին իրանց միջոցները Հայ ժողովրդին եւ հա-ղորդակից անելու քաղաքակրթութեան այդ մեծ գործօնի բարիք-ներին։

Եւ ամենամեծ ուրախութեամբ, Վեհափառ Տէր, ընդունելով Ձեր հրաւէրը՝ գալ և երկրպագել Օշականում հանգչող Մեծ Գրչի պաշտելի աճիւններին, Հայ վաճառականութիւնն իր բարոյական պարտքը համարեց նպաստել «Մեսրոպեան Լուսմային», որ Ձեր Վե-հափառութիւնը ստանձնեց ի յաւերժացումն Համազգային այս Մեծ Տօնի, և խոնարհաբար խնդրում է ընդունել իր չնչին լուման և թոյլ տալ մեզ՝ պատգամաւորներիս, որդիական խորին ակնածու-թեամբ մատուցանել Թիֆլիսի համայն Հայ վաճառականութեան ջեր-մեռանդ և սրտաբուղխ շնորհաւորութիւնները, ի դէմս Ձեր Վե-հափառութեան, Համազգային այս փառաւոր Յոբելեանի օրը, որ Հայ եկեղեցւոյ և Հայ ժողովրդի նուիրական օրն է։